## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 29

### ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել համայնքի ավագանու թիվ 8 նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ.

*1.Համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2017 թվականի համար սահմանելու մասին:*

*2.Համայնքի ավագանու 2015թ-ի դեկտեմբերի 24-ի թիվ 28-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը 2017 թվականի համար հաստատելու մասին:*

*3.Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հավելավճար սահմանելու մասին:*

*4.Համայնքի սեփականություն համարվող գույքի ամենամյա գույքագրման արդյունքները գնահատելու մասին:*

*5.Համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 30-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2017 թվականի համար սահմանել 180 000 /մեկ հարյուր ութանասուն հազար/ դրամ :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 31-Ն

## ԲԵՐԴԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2017Թ-Ի ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 28-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի , 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել Բերդիկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը 2017 թվականի համար՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2016 թվականի դեկեմբերի 15-ի թիվ 31-Ն որոշման

## *ԲԵՐԴԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ*

1. Աշխատակիցների թվաքանակը ՝ 8 ,
2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝

| *Հաստիքի անվանումը* | *Հաստիքային միավորը* | *Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/* |
|---|---|---|
| *Հայեցողական պաշտոններ* | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 80 000 |
| *Համայնքային ծառայության պաշտոններ* | | |
| Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար / ծածկ. 1.2-1 / | 1 | 105 000 |
| Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկ.3.1-1 / | 1 | 100 000 |
| Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /ծածկ.3.2-1/ | 1 | 72 800 |
| *Քաղաքացիական աշխատողներ* | | |
| Գրադարանավար | 1 | 72 800 |
| *Տեխսպասարկող անձնակազմ* | | |
| Հարկահավաք | 1 | 72 800 |
| Հավաքարար | 1 | 72 800 |
| Վարորդ | 1 | 80 000 |
| ***Ընդամենը*** | **8** | ***656 200*** |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՝ ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 32-Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Սահմանել համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունեցող աշխատակազմի քարտուղարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 5%-ի չափով հավելավճար:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 33

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 33 որոշման

## ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏ

02.12.2016թ. գ. Բերդիկ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման հանձնաժողովը ի դեմս նախագահ ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ.Հարությունյանի, անդամներ ՝ համայնքապետարանի վարորդ Ս.Ֆահրադյանի, համայնքապետարանի գրադարանավար Լ.Հակոբյանի,հիմք ընդունելով 2015թ.դեկտեմբերի 24-ի թիվ 29 որոշումը, կազմեցինք սույն ակտն այն մասին , որ ս/թ նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 1-ը կատարեցինք համայնքին պատկանող գույքի, կառույցների , շինությունների և առկա այլ ապրանքների ամենամյա գույքագրում ՝

| Հ/Հ | Գույքի անվանումը | Քանակը /միավոր/ | Գումարը /ՀՀ դրամ/ | Գույքագրման արդյունքում |
|---|---|---|---|---|
| 1. | Ակումբի շենք | 1 | 7 817 730 | առկա |
| 2. | Զգեստապահարան | 1 | 103 000 | առկա |
| 3. | Երկաթյա պահարան | 1 | 14 136 | առկա |
| 4. | Ջրավազան | 1 | 42 825 | առկա |
| 5. | Հեռուստացույց | 1 | 150 000 | առկա |
| 6. | Գազի խողովակաշար | 1 | 11 199 784 | առկա |
| 7. | Ավտոմեքենա Նիվա | 1 | 3 740 000 | առկա |
| 8 . | Ջահ | 2 | 30 000 | առկա |
| 9. | Օդորակիչ | 1 | 380 000 | առկա |
| 10. | Համակարգիչ | 1 | 320 000 | առկա |
| 11. | Համակարգիչ | 2 | նվիրատվություն | առկա |
| 12. | Տպիչ սարք | 1 | 150 000 | առկա |
| 13. | Տպիչ սարք | 1 | նվիրատվություն | առկա |
| 14. | Սկաներ | 1 | նվիրատվություն | առկա |
| 15. | UPS- 600 | 1 | 30 000 | առկա |
| 16. | UPS-AEG | 2 | նվիրատվություն | առկա |
| 17. | Գրասենյակային աթոռ | 6 | 72 000 | առկա |
| 18. | Զուգարանի շենք | 1 | 36 877 | առկա |
| 19. | Համայնքի ղեկավարի աշխատանքային սեղան, դիմադիր և կողադիր սեղաններ,տումբա | 1 | 140 000 | առկա |
| 20. | Ավտոմեքենայի գազի փուչիկ | 1 | 140 000 | առկա |
| 21. | Ավտոմեքենայի համակարգ | 1 | 360 000 | բացակա |
| 22. | Համակարգչի սեղան | 3 | 165 000 | առկա |
| 23. | Գրասեղան | 2 | 90 000 | առկա |
| 24. | Աթոռ | 1 | 150 000 | առկա |
| 25. | Աթոռ | 10 | 140 000 | առկա |
| 26. | Գրապահարան | 1 | 170 000 | առկա |
| 27. | Շերտավարագույր | 40քմ | 120 000 | բացակա |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***46միավոր և 40քմ*** | ***25 561 352*** | |

Հանձնաժողովի նախագահ ՝ Մ. Հարությունյան
Անդամներ ՝ Ս. Ֆահրադյան
Լ. Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՝ ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 34-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ `**

Հաստատել համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ` համաձայն հավելվածի :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 34-Ն որոշման

## ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

*Տեղական տուրքերի դրույքաչափերը*

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

*հիմնական օբյեկտների համար՝*

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10 000 դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ.

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1 500 դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2 500 դրամ:

**2.** Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1 500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

**3.** Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 3 000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 դրամ,

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝ օրական 150 դրամ ՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար,

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի/սեղմված բնական կամ հեղուկացված նավթային/ մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային/ վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:

3)խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 30 000 դրամ ,

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 000 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 5 000 դրամ:

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1 000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5 000 դրամ:

10. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել է 0.5 գործակից:

11. *Բերդիկ համայնքի տեղական վճարների դրույքաչափերը* ՝

1) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքինը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , շինարարության ավարտը փաստագրելու համար փոխհատուցման վճար ՝ 1 000 դրամ ,

2) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ

նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 1 000 դրամ ,

3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված զանազան ծախսերի փոխհատուցման համար ՝ մասնակիցներից վճար ՝ 1 000 դրամ :

4) աղբահանության և կենցաղային աղբը հեռացնելու համար վճար ՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ՝ ամսական 0 դրամ :

5) Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 10 000 քառակուսի մետրի համար 50 000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՝ ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ